

Fannie Mae®

Անհատական օգնություն տների սեփականատերերին և վարձակալներին, որոնք տուժել են Կալիֆորնիայի անտառային հրդեհներից

Fannie Mae ընկերությունը հանձն է առել օգնել տների սեփականատերերին, վարձակալներին և համայնքներին, որոնք տուժել են վերջին անտառային հրդեհներից: Եթե ձեր տունը կամ աշխատատեղը տուժել է, մենք կարող ենք օգնել ձեզ անցնել աղետի հետևանքների վերացման դժվարին գործընթացը՝ բնական աղետների հետևանքների վերացման վերաբերյալ խորհրդատվության միջոցով, որը տրամադրվում է 855-HERE2HELP (855-437-3243) հեռախոսահամարով:

Fannie Mae ընկերության՝ բնական աղետների հետևանքների վերացման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններն առաջարկում են անվճար աջակցություն, որը տրամադրվում է ԱՄՆ բնակարանաշինության և քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված՝ բնակարանային հարցերով խորհրդատուների կողմից: Աջակցությունը ներառում է.

- Աղետի հետևանքների վերացման անհատականացված գնահատում և գործողությունների ծրագիր
- Աջակցություն պարտքերի մարման հարցում, այդ թվում՝ հաշիվների, վարկային քարտերի և հիփոթեքային վճարների կամ վարձավճարների վճարման գծով:
- Օգնություն հայցապահանջների և մերժումների դեպքում (օրինակ՝ ԱՄՆ արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA), ապահովագրության, փոքր բիզնեսի կառավարման վերաբերյալ հարցերով)
- Բնական աղետների հետևանքների վերացման վերաբերյալ առցանց ֆորումներ, գործիքներ և կրթական նյութեր
- Ընթացիկ ստուգումներ՝ աղետի հետևանքների վերացման հաջող ընթացքն ապահովելու համար

Ծառայությունները հասանելի են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով

ԶԱՆԳԵՔ 855-HERE2HELP

(855-437-3243) ՀԱՄԱՐՈՎ

Կամ այցելեք FannieMae.com/HERE2HELP

Այլ աղբյուրներ

Աղետից տուժած մարդիկ կարող են օգնություն ստանալ նաև հետևյալ հաստատություններից.

- ԱՄՆ բնակարանաշինության և քաղաքաշինության նախարարություն (HUD)՝ **www.hud.gov**
- ԱՄՆ արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալություն (FEMA)՝ **www.disasterassistance.gov**
- Ամերիկյան Կարմիր Խաչ՝ **1-800-733-2767**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Զգուշացեք խաբեություններից

Բնական աղետներից տուժածներին խաբեբաները խարդախությամբ առաջարկում են կեղծ օգնություն: Միշտ ստուգեք առաջարկների օրինականությունը, երբեք մի տրվեք «անհապաղ միջոցներ ձեռնարկելու» հոգեբանական ճնշմանը՝ և հիշեք, որ հիփոթեքային օգնությունն ԱՆՎՃԱՐ է:

©2025 Fannie Mae: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

*Կառավարվում է Money Management International ընկերության Project Porchlight ծրագրի կողմից